

## Երկու Խօսք

### Մարզական Անցնող Տարին

2017 տարին լեցուն էր մարզական դրական եւ ժխտական դեպքերով: Ֆուտբոլի Զոնֆետերասիոնի բաժակը, Աշխարհի Բաժակի գտումի մրցումները, Աթլետիկոսի աշխարհի ախոյեանութիւնը եւ Լոդի աշխարհի ախոյեանութիւնը ամենակարեւոր մարզական տօներն էին: Հայաստան եւ Լիբանան արձանագրեցին ցամաքամասային եւ համաշխարհային յաջողութիւններ, ինչպէս նաեւ ծախողութիւններ, որոնցմէ դասեր պիտի քաղէն վստահաբար: Իսկ ժխտական ազդակ մըն էր զօրացուցիչ-doping օգտագործման դեպքերը եւ ամբողջ ֆետերասիոններու, օրինակ՝ Ռուսիոյ արգիլուիլը միջազգային մրցումներու մասնակցելէ: Այս դեպքերը բոլորն ալ փաստերու վրայ հիմնուած չէին ինչպէս միշտ, եւ կ'ենթադրուի, որ եղան քաղաքական միջամտութիւններ:

«Չարթօնք Սփոր»-ի այս յատուկ թիւով պիտի փորձենք ամփոփել մարզական տարին՝ սկիզբը հանդիսանալով անոր շաբաթօրեայ «Չարթօնք»ի մարզական յաւելումածին:

## Զմեռային Համալսարանական Խաղեր

### Սերկէյ Միքայէլեան Պրոնզէ Մետալակիր

Հայաստանի դահուկարշաւի ախոյեան եւ Հայաստանի դահուկարշաւի հաւաքականի անդամ Սերկէյ Միքայէլեան Հայաստանը ներկայացուց Համալսարանական Չմեռային խաղերուն: 10 քիլոմէթր դասական ոճի դահուկարշաւի մրցումին ան գրաւեց 4-րդ պատուաբեր դիրքը, արձանագրելով 25:49,5 վայրկեան: Իսկ 10 քիլոմէթր ազատ ոճի մրցումին, հայ մարզիկը գրաւած է 3-րդ դիրքը, արձանագրելով 27.04 վայրկեան:

## Համաշխարհային Ուսանողական Խաղեր

### Թովմասեան, Մարտիրոսեան եւ Մինասեան Տիտղոսակիր

Թայուանի մէջ տեղի ունեցած Համաշխարհային ուսանողական խաղերուն, Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականի անդամ Արթուր Թովմասեան օղակներ-rings մարզաձեւին մէջ շահեցաւ 15.025 կետ եւ գրաւեց առաջին դիրքը: 2-րդ դիրքը գրաւեց թուրք Իպրահիմ Չուլքը 14.958 կետով:

Ողիմպիական արծաթէ մետալակիր ծանրամարտիկ Սիմոն Մարտիրոսեան 105 քլ.դասակարգին մէջ արձանագրեց հետեւեալ արդիւնքները. պոկում՝ 180 քլ. հրում՝ 221 քլ. եւ երկամարտի 401 քիլոկրամով գրաւեց առաջին դիրքը:

Ծանրամարտի մէջ Հայաստանէն Գոռ Մինասեան 105+ քլ.դասակարգին մէջ արձանագրեց հետեւեալ արդիւնքները. պոկում՝ 200 քլ. հրում՝ 230 քլ. եւ երկամարտի 430 քիլոկրամով գրաւեց առաջին դիրքը:

Այս խաղերուն Հայաստանէն ծանրամարտիկ Անդրանիկ Մանուկեան շահած է արծաթէ մետալ, իսկ թաեքուոնտոյի մարզիկ Սերկէյ Վարդագարեանը պրոնզէ մետալ:

## Ֆրանքֆոնեան Խաղեր

### Մէկ Ոսկի, Երեք Արծաթ եւ Երեք Պրոնզ

Փղոսկրեայ Ափունքի մէջ աւարտեցան ֆրանսախօս երկիրներու Ֆրանքֆոնեան խաղերը: Հայաստան մասնակցեցաւ այս մրցումներուն եւ արձանագրեց հետեւեալ արդիւնքները.

- ճիւտոյի 90 քլ.դասակարգին մէջ Գրիգոր Սահակեան գրաւեց երրորդ դիրքը եւ շահեցաւ պրոնզէ մետալ:

- Ազատ ոճի ըմբշամարտի մրցումներուն Հայաստան շահեցաւ մէկ ոսկիէ, երեք արծաթէ եւ երկու պրոնզէ մետալներ:

## Ֆուտբոլ

### ՖԻՖԱ-ի Զոնֆետերասիոնի Բաժակ

### Գերմանիա Շահեցաւ Տիտղոսը



ՖԻՖԱ-ի կազմակերպած ցամաքամասներու ախոյեաններու բաժակի՝ Զոնֆետերասիոնի բաժակի մրցաշարքը հասաւ իր աւարտին: Գերմանիոյ եւ Չիլիի միջեւ մրցումը տեղի ունեցաւ Սենթ Փեթերսպուրկ քաղաքի «Քրեսթովսքիյ» մարզադաշտին վրայ, 57000 մարզասերներու ներկայութեան: Մրցումին սկիզբը Չիլիի Ալեքսիս Սանչէս Արթուրո Վիտալ զոյգը բաւական վտանգաւոր էին, սակայն ապարդիւն: 20-րդ վայրկեանին, Գերմանիան կազմակերպեց հակայարձակում մը, որու ընթացքին չիլիցի պաշտպան Մարսելլօ Տիագ գնդակը սխալմամբ ուղղեց Վերըրին, որ առանց վարանումի փոխանցեց տուգանային հրապարակին մէջ լաւ դիրք ունեցող Լարս Սթինտլին, որ նշանակեց խումբին կոլը: Թէեւ Չիլին աւելի ճնշող հաւաքականն էր, սակայն առանց արդիւնքի հասնելու, միւս գերմանացիները աւելի վտանգաւոր էին: Մրցումը աւարտեցաւ Գերմանիոյ 1-0 հաշիւով յաղթանակով: Անոնք շահեցան իրենց առաջին Զոնֆետերասիոնի բաժակի տիտղոսը: Փակման հանդիսութիւնը յատկանշուեցաւ Ռուսիոյ պատմութեան եւ Զոնֆետերասիոնի բաժակը շահած երկիրներու մասին յայտագիրով: Անգամ մը եւս Ռուսիա փաստեց, որ մարզական յաջող մրցաշարքեր կազմակերպող առաջնակարգ երկիրներէն մէկն է:

Երրորդ դիրքի մրցումին, Փորթուկալ մրցեցաւ Մեքսիքայի դէմ Մոսկուայի «Աթլետիկօ Լիոն» մարզադաշտին վրայ 43000 մարզասերներու ներկայութեան: Մրցումի 17-րդ վայրկեանին փորթուկալցի Անտրէ Սիլվա չի կրցաւ նշանակել տուգանային հարուած մը, իսկ 54-րդ վայրկեանին փորթուկալցի պաշտպան Նեթօ սխալմամբ նշանակեց իր դարպասին մէջ: Զիչ մնաց Փորթուկալ պարտուէր, սակայն զայն փրկողը եղաւ Փեփէն, որ նշանակեց 90+1-րդ վայրկեանին, Զուարեզմայէն փոխանցում ստանալով: Մրցումին հիմնական ժամանակը աւարտեցաւ 1-1 հաւասար հաշիւով: Երկարաձգուած ժամանակի 104-րդ վայրկեանին, Ատրիէն Սիլվա տուգանային հարուածով նշանակեց Փորթուկալի երկրորդ կոլը: Մրցումին մնացած ժամանակը հարուստ էր խոշտանգումով: 106-րդ վայրկեանին փորթուկալցի Նելսոն Սեմեո կարմիր քարտ ստացաւ, մինչ 112-րդ վայրկեանին մեքսիքացի Էմիլիո Կարմիր քարտ ստացաւ: Մրցումը աւարտեցաւ Փորթուկալի 2-1 հաշիւով յաղթանակով եւ խումբը գրաւեց 3-րդ դիրքը:

## Աշխարհի Բաժակի Եւրոպայի Չտում

### Հայաստան Գրաւեց 5-րդ Դիրքը

Աշխարհի բաժակի Եւրոպայի գօտիի գտումի 10-րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, Երրորդ խմբակին մէջ Գերմանիա աւարտեց մրցաշարքը առանց կետ կորսնցնելու, իսկ Հիւսիսային Իրլանտան գրաւեց երկրորդ

դիրքը եւ պիտի մասնակցի փլեյ օֆին հասնելու համար արտակազմական հանգրուան: Հինգերորդ խմբակին մէջ, Հայաստան մրցաշարքը արտեց հաւասարելով Ղազախստանի մէջ: Լեհաստան գրաւեց առաջին դիրքը, իսկ Ղանիան՝ երկրորդ դիրքը ու ապահովեց փլեյ օֆի տոմար: Իսկ վեցերորդ խմբակին մէջ, Սկովտիան ինկաւ հաւասարութեան ծուղակին մէջ եւ նահանջեց 3-րդ դիրք, մինչ Սլովաքիան յաղթեց եւ ապահովեց փլեյ օֆի տոմար: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Ա.խմբակ.**  
 - Շուէտ - Լիքսեմպուրկ 8-0, - Պելառուսիա - Հոլանտա 1-3  
 - Պոլկարիա - Ֆրանսա 0-1, կոլ.Պ.Մաթուիտի 3, փոխ.Կրիզման  
 Դասաւորում.1-Ֆրանսա 20 կէտ 16-5, 2-Շուէտ 19 կէտ 26-7, 3-Հոլանտա 16 կէտ 19-12, 4-Պոլկարիա 12 կէտ 13-18
- Բ.խմբակ.**  
 - Ֆարո Կղզիներ - Լաթվիա 0-0  
 - Անտորրա - Փորթուկալ 0-2, կոլեր.Ռոնալտո 63, Ա.Սիլվա 86  
 - Չուիցերիա - Հունգարիա 5-2, կոլեր.Խաքա 18, Ֆրայ 20, Չուլպըր 43, 49, Լիխթշթայնըր 83 - Կուլմից 58, Ուկրայ 88  
 Դասաւորում.1-Չուիցերիա 27 կէտ 23-5, 2-Փորթուկալ 24 կէտ 30-4, 3-Հունգարիա 10 կէտ 13-14, 4-Ֆարո Կղզիներ 9 կէտ 4-15
- Գ.խմբակ.**  
 - Չեխիա - Սան Մարինո 5-0  
 - Գերմանիա - Ատրալեյճան 5-1, կոլեր.Կորեցքա 8, 66, Վակնըր 54, Ռուտիկըր 64, Զան 81 - Սեյտայե 34  
 - Նորվեկիա - Հիւ.Իրլանտա 1-0  
 Դասաւորում.1-Գերմանիա 30 կէտ 43-4, 2-Հիւ.Իրլանտա 19 կէտ 17-6, 3-Չեխիա 15 կէտ 17-10, 4-Նորվեկիա 13 կէտ 17-16, 5-Ատրալեյճան 10 կէտ 10-19
- Ե.խմբակ.**  
 - Ղազախստան - Հայաստան 1-1, կոլեր.Թուրիսպեք 61, փոխ.Մուրթազայե  
 - Միսթարեան 26, փոխ.Փիցելլի  
 - Դանիա - Ռումանիա 1-1, կոլեր.Էրիքսըն տուգ.59 - Տեաք 88  
 - Լեհաստան - Մոնթենեկրո 4-2, կոլեր.Մաչիսքի 6, Կրոզիցքի 16, Լեանտովսքի 85, Սթոյքովիչ սխալ.87 - Մուկոշա 78, Թոմաշեւիչ 83  
 Դասաւորում.

1-Լեհաստան	10 մ	8 յ	1 հ	1 պ	25 կէտ 28-14
2-Դանիա	10	6	2	2	20 կէտ 20-8
3-Մոնթենեկրո	10	5	1	4	16 կէտ 20-12
4-Ռումանիա	10	3	4	3	13 կէտ 12-10
5-Հայաստան	10	2	1	7	7 կէտ 10-26
6-Ղազախստան	10	0	3	7	3 կէտ 6-26

**2018-ի Աշխարհի Բաժակի Խմբակներ**



Կազմակերպիչ երկիր Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ 2018-ի ֆուտբոլի աշխարհի բաժակի վիճակագրութիւնը: Մասնակցող 32 հաւաքականները բաժնուեցան հետեւեալ ձեւով.

- Ա.խմբակ.** Ռուսիա,Ուրուկուէյ,Եգիպտոս, Սեւ-տական Արաբիա  
**Բ.խմբակ.** Փորթուկալ, Սպանիա, Իրան, Մարոք  
**Գ.խմբակ.** Ֆրանսա, Փերու, Ղանիա, Աւստրալիա  
**Դ.խմբակ.** Արժանթին, Իսլանտա, Իրուաթիա, Եկվորիա

- Ե.խմբակ.** Պրագիլ, Չուիցերիա, Զոսթա Ռիքա, Սերպիա  
**Զ.խմբակ.** Գերմանիա, Մեքսիքա, Շուէտ, Հար.Զորեա  
**Է.խմբակ.** Պելճիքա, Անգլիա, Թունիզ, Փանամա  
**Ը.խմբակ.** Լեհաստան, Զոլոմպիա, Սենեկալ, Ճաբոն

**ՖԻՖԱ-ի Աշխարհի Ակումբներու Բաժակ**

**Ռեալ Մատրիտ Տիտղոսակիր**



Ճաբոնի մէջ տեղի ունեցող, ՖԻՖԱ-ի կազմակերպած աշխարհի ցամաքամասներու ախոյեան ակումբներու տարեկան մրցաշարքի արտակազմական մրցումին, Երոսիամա քաղաքի «Նիսան Սթատիում» մարզադաշտին վրայ, 68000 մարզասերներու ներկայութեան, Երոսիայի ախոյեան «Ռեալ Մատրիտ»ը յետ երկարաձգումի յաղթեց արտակազմական հասած Ճաբոնի ախոյեան «Քաշիմա Էնթլըրզ»ին 4-2 հաշիւով: Մրցումին հաշիւը բացաւ Զարիմ Պենզեման 9-րդ վայրկեանին «Ռեալ Մատրիտ»ի համար: Այնուհետեւ 44-րդ եւ 52-րդ վայրկեաններուն «Էնթլըրզ»ի Շիպասաքին իր խումբը յառաջ տարաւ երկու կոլերով: 60-րդ վայրկեանին, Զրիսթիանո Ռոնալտոն տուգանային հարուածով հաշիւը դարձուց 2-2: Մրցումին հիմնական ժամանակը հաւասարութեամբ արտեցաւ: Երկարաձգումի 97-րդ վայրկեանին, Ռոնալտո նշանակեց իր խումբին երրորդ կոլը, Պենզեմայի փոխանցումէն օգտուելով: Իսկ 104-րդ վայրկեանին Ռոնալտոն Զրաուսի փոխանցումը օգտագործեց եւ հաշիւը դարձուց 4-2: Մրցումը այդ հաշիւով արտեցաւ եւ «Ռեալ Մատրիտ» տիտղոս մըն ալ աւելցուց իր պահարանին:

Երրորդ դիրքի մրցումին, Հարաւային Ամերիկայի ախոյեան Զոլոմպիոյ «Աթլէթիքո Նասիոնալ»ը տուգանային հարուածներու 4-3 հաշիւով յաղթեց Հիւ.Եւ. Կեդր. Ամերիկայի ախոյեան Մեքսիքայի «Ամերիքա»ին: Երկարաձգուած ժամանակին խումբերը հաւասարած էին 2-2 հաշիւով:

**Չեմփիընզ Լիկ**

**Ռեալ Մատրիտ Դարձեալ Տիտղոսակիր**

2017 տարուան Երոսիայի Չեմփիընզ Լիկի արտակազմական մրցումը տեղի ունեցաւ Կալէսի Զարտիֆ քաղաքի մարզադաշտին վրայ: 65000 մարզասերներու ներկայութեան մրցեցան անցեալ տարուան ախոյեան «Ռեալ Մատրիտ»ը եւ Իտալիոյ ախոյեան «Եուվենթիս»ը: Մրցումը սկսաւ «Եուվենթիս»ի ճնշումով, սակայն «Ռեալ Մատրիտ»ն եր որ բացաւ մրցումին հաշիւը 20-րդ վայրկեանին Զրիսթիանո Ռոնալտոյի միջոցով եւ Տանիէլ Զարվախալի փոխանցումով: Եթ Վայրկեան ետք Մարիո Մանճուքիչ հաւասարեցուց հաշիւը Հիկուէյի փոխանցումը օգտագործելով: Առաջին կիսախաղը արտեցաւ 1-1 հաւասար հաշիւով: Երկրորդ կիսախաղին սկիզբը «Ռեալ Մատրիտ» շարունակեց յարձակիլ: 61-րդ վայրկեանին Զազիմիրոն նշանակեց «Ռեալ Մատրիտ»ի երկրորդ կոլը: 64-րդ վայրկեանին Մոտրիչ գեղեցիկ փոխանցում մը կատարեց Զրիսթիանո Ռոնալտոյին, որ նշանակեց «Ռեալ»ի 3-րդ կոլը: 83-րդ վայրկեանին «Եուվենթիս»ի Զուատրատոն, որ փոխարինած էր Պարզակլին, կարմիր քարտ ստացաւ: Իսկ 90-րդ վայրկեանին, Մարքո Ասենսիօ, որ փոխարինած էր Իսքոն, նշանակեց «Ռեալ Մատրիտ»ի 4-րդ կոլը: Մրցումը արտեցաւ «Ռեալ Մատրիտ»ի 4-1 հաշիւով յաղթանակով ու խումբը դարձաւ Չեմփիընզ Լիկի տիտղոսը պահող միակ խումբը: Այս մէկը «Ռեալ Մատրիտ»ի 12-րդ տիտղոսն էր: Այս մրցաշարքը սկսած է 1955-ին: Տիտղոսը շահած են նաեւ «Միլան»ը՝ 7 անգամ, «Պարսելոնա»ն, «Պայըրն Միլիիս»ը եւ «Լիվըրփուլ»ը՝ 5-ական անգամ, «Այաքս Ամսթերտամ»ը՝ 4 անգամ, «Ինթեր Միլան»ը եւ «Մանչեսթըր Եունայթըտ»ը՝ 3-ական անգամ, «Եուվենթիս»ը՝ 2 անգամ եւ 13 այլ խումբեր:

**Իւրոքա Լիկ**

**Մանչեսթըր Եունայթըտ Յաղթեց Այաքսին**



Շուէտի Սոլա քաղաքի «Ֆրենձ Արենա» մարզադաշտին վրայ 47000 մարզասերներու ներկայութեան տեղի ունեցաւ 2017 տարուան Իւրոքա Լիկի արտակազմական մրցումը Հոլանտայի «Այաքս Ամսթերտամ»ի եւ Անգլիոյ «Մանչեսթըր Եունայթըտ»ի միջեւ: Այս մրցումին ճիշդ է որ «Այաքս»ի երիտասարդները տիրապետեցին 67 առ հարիւր համեմատութեամբ, սակայն «Եունայթըտ»ի մարզիկները աւելի ազդու էին: 18-րդ վայրկեանին, Փոլ Փոկպա բացաւ մրցումին հաշիւը Ֆելայինիի փոխանցումէն օգտուելով, իսկ 48-րդ վայրկեանին, Հենրիխ Միսթարեան նշանակեց «Եունայթըտ»ի երկրորդ կոլը, Սմոլինկի փոխանցումը օգտագործելով: 74-րդ վայրկեանին Լինկարտ փոխարինեց Միսթարեանը: Մրցումը արտեցաւ «Մանչեսթըր Եունայթըտ»ի 2-0 հաշիւով յստակ յաղթանակով: «Չելսի»էն ետք «Մանչեսթըր Եունայթըտ» դարձաւ երկրորդ խումբը, որ շահած է Երոսիայի չորս բաժակները: Խումբը նաեւ ապահովեց յաջորդ տարեշրջանին «Չեմփիընզ Լիկ»ի իր մասնակցութիւնը:

Եւրոպայի Սիւբըր Բաժակ

Ռեալ Մատրիտի Երկրորդ Անընդմէջ Տիտղոսը

Եւրոպայի Սիւբըր Բաժակի մրցումը իրարու դէմ հանեց Եւրոպայի ախոյեան «Ռեալ Մատրիտ»ը եւ Իւրոբա Լիկի ախոյան «Մանչեսթըր Եունայթըդ»ը: Մրցումը տեղի ունեցաւ Մակեդոնիոյ մայրաքաղաք Սքոփիէի «Ֆիլիփ Բ.» մարզադաշտին վրայ բազմահազար մարզասերներու ներկայութեան: Մրցումին սկիզբէն տիրապետող կազմն էր «Ռեալ Մատրիտ»ը, որուն աստղը՝ Ռոնալտոսն մրցումը սկսաւ որպէս փոխարինող: Մրցումին հաշիւը բացաւ «Ռեալ Մատրիտ»ի Զագիմիրոս 24-րդ վայրկեանին, Տանիէլ Զարվախալի փոխանցումէն օգտուելով: Երկրորդ կիսախաղի 52-րդ վայրկեանին Իսթո հաշիւը դարձուց 2-0, Կարթե Պելլի փոխանցումէն օգտուելով: 62-րդ վայրկեանին «Մանչեսթըր Եունայթըդ»ի Լուքաքուն կրճատեց հաշիւը: Մրցումի վերջին վայրկեաններուն Մարքուս Ռեշֆըրտ քիչ մնաց հաւասարութեան կողմ նշանակեր: Միտիթարեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Մրցումը ավարտեցաւ «Ռեալ Մատրիտ»ի 2-1 հաշիւով յաղթանակով: Խումբը շահեցաւ իր 4-րդ Սիւբըր բաժակի տիտղոսը: Այս տիտղոսը նաեւ շահած են «Պարսելունա»ն ու «Միլան»ը 5-ական անգամ, «Լիվըրփուլ»ը 3 անգամ, 19 այլ խումբեր, եւ «Մանչեսթըր Եունայթըդ»՝ 1 անգամ, 1991-ին:

Զոփա Լիպերթատորես

Պրագիլի Կրեմիոն Տիտղոսակիր

Յարաւային Ամերիկայի ակումբներու ամենակարեւոր մրցաշարքի՝ Զոփա Լիպերթատորեսի ավարտական մրցումի դարձին, Պրագիլի «Կրեմիոն»ն կրկնեց երթին արձանագրած յաղթանակը, այս անգամ 2-1 հաշիւով շահելու համար տիտղոսը: Ստորեւ տեսնել արձանագրուող արդիւնքը.

- Լանուս (Արժ.) - Կրեմիո (Պր.) 1-2, Երթ.0-1
- Կլոլեր.Խ.Սանտ տուգ.72 - Ֆերնանտինիո 27, Լուան 42

Ռոնալտո 2017-ի Ամենալա Մարզիկ

Փորթուկալի հաւաքականի եւ «Ռեալ Մատրիտ»ի յարձակող Զրիսթիանո Ռոնալտո շահեցաւ 2017-ի ամենալա ֆութպոլիստի տիտղոսը: Այս մէկը մարզիկին 5-րդ տիտղոսն էր: «ՖԻՖԱ»ի կողմէ շնորհուած մրցանակը շնորհուեցաւ փորթուկալցի վարպետին շրջանցելէ ետք արժանթինցի Մեսսին եւ պրագիլցի Նեյմարը: «Ռեալ Մատրիտ»ի մարզիչ Չեյնըտտին Չիտան շահեցաւ ամենալա մարզիչի տիտղոսը, իտալացի Ժանլուիճի Պուֆոն շահեցաւ ամենալա դարպասապահի տիտղոսը եւ Օլիվիէ Ժիրու շահեցաւ ամենագեղեցիկ կողի տիտղոսը:

Զրիսթիանո Ռոնալտոյի 5-րդ Ոսկէ Գնդակը

Փորթուկալի եւ «Ռեալ Մատրիտ»ի յարձակող Զրիսթիանո Ռոնալտո շահեցաւ «Ոսկէ Գնդակ»ի տիտղոսը 5-րդ անգամ ըլլալով: Ան այս ձեւով հաւասարեցաւ արժանթինցի Լիոնէլ Մեսսիին, որ տիտղոսը շահած էր 5 անգամ: Այս մրցանակը կը տրուի ֆրանսական «Ֆրանս ֆութպոլ» մարզական պարբերաթերթին կողմէ: Ռոնալտո իր խումբին՝ «Ռեալ Մատրիտ»ին հետ շահած էր Սպանիոյ ախոյեանութեան տիտղոսը եւ Եւրոպայի Չեմփիընզ Լիկի տիտղոսը:

Ֆութպոլի Պատմութեան 5 Ամենասուղ Մարզիկները

- 1-Նեյմար-«Պարսելունա»էն «Փարի Սէն Ժերմէն» 222 միլիոն եւրո:
- 2-Փոլ Փոկպա-«Եուվենթիս»էն «Մանչեսթըր Եուն.» 105 միլիոն եւրո:
- 3-Կարթե Պելլ-«Թոթընհեմ»էն «Ռեալ Մատրիտ» 101 միլիոն եւրո:
- 4-Զրիսթիանո Ռոնալտո-«Մանչեսթըր Եուն.»էն «Ռեալ Մատրիտ» 94 միլիոն եւրո:
- 5-Կոնգալօ Իկուային-«Նափոլի»էն «Եուվենթիս» 90 միլիոն եւրո:

Պասքեթպոլ

Էն Պի Էյ

Կոլտըն Սթեյթ Ուորիըրզ Տիտղոսակիր

ԱՄՆ-ի արհեստավարժ պասքեթպոլի ախոյեանութեան ավարտական հանգրուանի հինգերորդ մրցումին, «Կոլտըն Սթեյթ Ուորիըրզ»ը տարաւ իր չորրորդ յաղթանակը, երբ յաղթեց «Զիլվէստ Զավալիըրզ»ին 129-120 հաշիւով եւ մրցումներու հաշիւը դարձաւ 4-1 ի նպաստ «Ուորիըրզ»ի: Այսպիսով «Կոլտըն Սթեյթ Ուորիըրզ» շահեցաւ Էն Պի Էյ-ի ախոյեանութեան տիտղոսը: «Զավալիըրզ»ի ամենալա նշանակողն էր ԼեօՊրոն Ճէյմզը՝ 41 կետ, 13 ռիպաունտ, 8 փոխանցում եւ 2 սթիլ, իսկ «Ուորիըրզ»ի ամենալա նշանակողն էր Զեվին Տիրանը՝ 39 կետ, 7 ռիպաունտ, 5 փոխանցում եւ 1 սթիլ: Այս «Կոլտըն Սթեյթ Ուորիըրզ»ի 5-րդ տիտղոսն էր: Տիտղոսը նաեւ շահած են «Պոսթըն Սեյթիքս»ը՝ 17 անգամ, «Լոս Անճելըս Լէյքըրզ»ը՝ 16

անգամ, «Շիքսօ Պուլզ»ը՝ 6 անգամ, «Սան Անթոնիօ Սփըրզ»ը՝ 5 անգամ եւ 14 այլ խումբեր:

Արեւմտեան Ասիոյ Ակումբներու Ախոյեանութիւն

Ռիատի Պէյրուօ Տիտղոսակիր

Արեւմտեան Ասիոյ ակումբներու ախոյեանութեան ավարտական հանգրուանին, «Ռիատի Պէյրուօ» յաղթեց Իրանի «Փեթրոշիմի» խումբին եւ շահեցաւ այս մրցաշարքի իր 4-րդ տիտղոսը: «Ռիատի»ի կազմէն փայլեցան Ամիր Սաուտը, Ժան Ապտէլսուրը, Ալի Յայտարը եւ Ալատէն: Երրորդ դիրքը գրաւեց Պաղեստինին «Սարիյաթ Ռամալլա»ն յաղթելէ ետք Իրանի «Նաֆթ ապատան»ին: Առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը պիտի մասնակցին Ասիոյ ակումբներու ախոյեանութեան մրցաշարքին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ռիատի Պէյրուօ - Փեթրոշիմի 83-69

Ասիոյ Ախոյեանութիւն

Աստրալիա՝ Ախոյեան, Լիբանան՝ 6-րդ



Ասիոյ պասքեթպոլի ախոյեանութեան կիսավարտական հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Աստրալիա - Նոր Չելանտա 106-79, - Իրան - Յար. Զորեա 87-81
- Աւարտական մրցումին Աստրալիա յաղթեց Իրանին 79-56 հաշիւով եւ շահեցաւ տիտղոսը: Աստրալիոյ ամենալա մարզիկն էր Պրետ Նիուլի՝ 18 կետ, 1 ռիպաունտ, իսկ Իրանի ամենալա մարզիկն էր Արսալան Զագեմի՝ 9 կետ, 10 ռիպաունտ, 1 փոխանցում, 2 սթիլ, 1 պլոք շոթ:
- 3-րդ դիրքի մրցումին, Յար.Զորեա յաղթեց Նոր Չելանտային 80-71 հաշիւով:
- 5-8րդ դիրքերու դասաւորումի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- Յորդանան - Չինաստան 55-86, - Լիբանան - Ֆիլիպին 106-87
- Լիբանանի ամենալա մարզիկ.Նորվել Փել՝ 23 կետ, 13 ռիպ. 1 փոխ. 1 սթիլ, 9 պլոք շոթ:
- 5-6րդ դիրքերու մրցում. Լիբանան - Չինաստան 78-79
- Լիբանան գրաւեց 6-րդ դիրքը:
- Լիբանանի ամենալա մարզիկ.Ֆատի Ալ Խաթիպ՝ 30 կետ, 8 ռիպ. 4 փոխ.:

Ասիոյ Ակումբներու Ախոյեանութիւն

Ռիատի Շահեցաւ Տիտղոսը

Չինաստանի մէջ տեղի ունեցող պասքեթպոլի Ասիոյ ակումբներու ախոյեանութեան ավարտական հանգրուանին, «Ռիատի Պէյրուօ» յաղթեց Չինաստանի գորաւոր «Չայնա Զաշկար»ին 88-59 հաշիւով ու ապահովեց Ասիոյ ակումբներու ախոյեանութեան տիտղոսը երկրորդ անգամ ըլլալով 2011-էն ի վեր: Ամենալա նշանակողն էր ամերիկացի Զրիս Տենիըզ՝ 21 կետ, 10 ռիպաունտ: «Յիքմէ» նոյն տիտղոսը շահած է երեք անգամ:

Լիբանանի Ախոյեանութիւն

Ռիատի Պահեց Տիտղոսը

Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան ավարտական հանգրուանի վեցերորդ մրցումին, «Ռիատի Պէյրուօ» ընդունեց «Յ.Մ.Ը.Մ.»ը եւ յաղթեց 70-56 հաշիւով ու մրցումներու հաշիւը դարձաւ 4-2 ի նպաստ «Ռիատի»ի: «Ռիատի» արձանագրելով 4-րդ յաղթանակը, պահեց տիտղոսը: Ֆատի Ալ Խաթիպի վնասուածք ստանալը մեծ հարուած էր «Յ.Մ.Ը.Մ.»ի համար եւ մարզիկին բացակայութիւնը ազդեց խումբի արդիւնքին վրայ: «Յ.Մ.Ը.Մ.»ի ամենալա նշանակողն էր Յայկ Կեօքճեան՝ 20 կետ, 13 ռիպաունտ եւ 1 փոխանցում: Իսկ «Ռիատի»ի ամենալա նշանակողն էր Էտկար Սուզան՝ 16 կետ, 3 ռիպաունտ:

Արեւմտեան Ասիոյ Ախոյեանութիւն

Լիբանան Տիտղոսակիր

Արեւմտեան Ասիոյ պասքէթպոլի ախոյեանութեան 4-րդ հանգրուանի մրցումն էր Լիբանան - Յորդանան մրցումը: Լիբանան տարաւ կարելոր յաղթանակ մը 72-61 հաշիւով: Այս արդիւնքին հիման վրայ Լիբանան ապահովեց Արեւմտեան Ասիոյ տիտղոսը: Իսկ 5-րդ մրցումին, Լիբանան յաղթեց Սուրիոյ հաւաքականին 78-64 հաշիւով: Լիբանան տարաւ 5 յաղթանակներ:

Արաբական Կիներու Ակումբներու Ախոյեանութիւն

Յ.Մ.Ը.Մ. Շահեցաւ Տիտղոսը



Պէյրուքի մէջ տեղի ունեցող պասքէթպոլի արաբական կիներու ակումբներու ախոյեանութեան աւարտական մրցումին, «Յ.Մ.Ը.Մ.» մրցեցաւ թունուզի զօրաւոր «Ալ Սաֆաքսի»ին դէմ եւ յաղթեց 61-50 հաշիւով ու շահեցաւ իր առաջին արաբական տիտղոսը: Այս տիտղոսը նաեւ շահած են «Յիքմէ»ն՝ 1 անգամ, «Անդրանիկ»ը՝ 2 անգամ եւ «Ռիատի»ն՝ 2 անգամ:

Ֆուտսալ

Լիբանանի Ախոյեանութիւն

Պանք Պէյրուք Տիտղոսակիր

Լիբանանի ֆուտսալի տղոց աւարտական հանգրուանի երրորդ մրցումին, «Պանք Պէյրուք» յաղթեց «Բանակ»ին 5-0 հաշիւով եւ տանելով երրորդ յաղթանակը շահեցաւ 2017-ի ախոյեանութեան տիտղոսը: Կոլերու հեղինակ դարձան սերպ Տրական Թոմիչ, Ահմատ Խէյրլոտին, Մոսթաֆա Սըրիան, Ալի Թնէյժ եւ Զարիմ Ապու Չէյտ:

Լիբանանի Բաժակ

Շապապ Աշրաֆիէ Շահեցաւ Տիտղոսը

Լիբանանի ֆուտսալի բաժակի մրցաշարքի աւարտական մրցումին իրարու դէմ ելան «Շապապ Աշրաֆիէ»ն եւ Բ.դասակարգի ախոյեան «Լուայզէ»ն: Մրցումը կայացաւ «Էմիլ Լահուտ» մարզական համալիրին մէջ եւ աւարտեցաւ «Շապապ Աշրաֆիէ»ի յաղթանակով 6-1 հաշիւով: Խոււմբը շահեցաւ ֆուտսալի իր առաջին տիտղոսը: Կոլերու հեղինակ դարձան պրազիլցի Ռոտուֆօ Տա Զոսթան՝ 2, Զամէլ Իլիասը՝ 2, Մոսթաֆա Ռիայէմը եւ Էլի Աքիբի: Ժոզէֆ Պիթար նշանակեց «Լուայզէ»ի միակ կոլը:

Ասիոյ Ախոյեանութեան Չտում

Լիբանան Յասաւ Աւարտական Մրցաշարք

Լիբանանի ֆուտսալի հաւաքականը ապահովեց իր տոմսը Ասիոյ աւարտական մրցաշարքին գոհացուցիչ արդիւնքներ արձանագրելէ ետք Արեւմտեան Ասիոյ գտումի մրցումներուն: Լիբանանի հաւաքականը արձանագրեց հետեւեալ արդիւնքները.

- Լիբանան - Յորդանան 3-1
- Լիբանան - Զաթար 3-1

Կոլեր. Յասան Չէյթուն 16, 40, Սերժ Գուլյումճեան 31 - Իսա Ալ Սեուտի 40

Լիբանան գրաւեց գտումի Բ.խմբակին առաջին դիրքը եւ ապահովեց Փետրուարին Թայուանի մէջ տեղի ունենալիք Ասիոյ աւարտական մրցաշարքին իր տոմսը:

Եւրոպայի Ակումբներու Ախոյեանութիւն

Լէօ՝ 2-րդ

Եւրոպայի ֆուտսալի ֆետերասիոնին կազմակերպած ֆուտսալի ակումբներու ախոյեանութեան առաջին հանգրուանին, 5-րդ խմբակին մէջ, Յայաստանի ախոյեան «Լէօ»ն պարտուեցաւ Խրուաթիայի ախոյեան «Նացիոնալ»էն 1-4 հաշիւով: «Լէօ»ի միակ կոլը նշանակեց Գարեգին Մաշումեանը: Երկրորդ մրցումին, «Լէօ» հաւասարեցաւ Ֆրանսայի ախոյեան «Կարժ Ճիպսոն» հետ 4-4 հաշիւով: Իսկ երրորդ եւ վերջին մրցումին «Լէօ» յաղթեց Զոսովոյի ախոյեան «Լիպուրն»ին 6-5 հաշիւով: «Լէօ» գրաւեց խմբակին երկրորդ դիրքը եւ դուրս մնաց յետագայ պայքարէն: Առաջին դիրքը գրաւեց Խրուաթիոյ «Նացիոնալ»ը եւ անցաւ յաջորդ հանգրուան: «Լէօ»ի կազմէն փայլեցան Սարգիս Նասիպեան, Գարեգին Մաշումեան, Սլոպոտան Յանիչ եւ Տիգրան Վարդանեան:

Ռակպի Լիկ

Աշխարհի Ախոյեանութիւն

Լիբանան Մնաց Վերջին Ուրին Մէջ

Լիբանանի ռակպի լիկի հաւաքականը հասաւ աշխարհի ախոյեանութեան աւարտական մրցաշարքին, որ տեղի ունեցաւ Աւստրալիոյ մէջ: Լիբանանի հաւաքականը արձանագրեց հետեւեալ արդիւնքները.

- Լիբանան - Աւստրալիա 0-34, - Լիբանան - Անգլիա 10-29
- Լիբանան - Ֆրանսա 29-18

Լիբանան գրաւեց խմբակին երրորդ դիրքը եւ անցաւ քառորդ աւարտական հանգրուան: Քառորդ աւարտական հանգրուանին Լիբանան մրցեցաւ Թունկայի զօրաւոր հաւաքականին դէմ եւ զիջեցաւ 22-24 հաշիւով ու դուրս մնաց պայքարէն: Ախոյեան դարձաւ Աւստրալիան, որ աւարտական մրցումին յաղթեց Անգլիոյ 6-0 հաշիւով:

Միջերկրականի Ախոյեանութիւն

Լիբանան Ախոյեան



Լիբանանի ռակպի լիկի հաւաքականը յաղթեց Իտալիային 6-4 հաշիւով եւ շահեցաւ Միջերկրական Ծովու ախոյեանութեան տիտղոսը: Լիբանանի միակ թրայը՝ 4 կէտ, արձանագրեց Ճեֆրի Թոմսէն մրցումի առաջին վայրկեանին: Ուաէլ Յարպ նշանակեց կոլը՝ 2 կէտ: Իսկ Իտալիոյ միակ թրայը արձանագրեց Ֆապիօ Պորիան 30-րդ վայրկեանին:

Թենիս

Աւստրալիոյ Բաց Մրցաշարք

Ֆետերեր Եւ Ուիլիըմզ Տիտղոսակիր

Աւստրալիոյ Բաց մրցաշարքի տղոց աւարտական մրցումին, գուլիցերիացի թիւ 17 դասուած Ռոժէ Ֆետերեր յաղթեց թիւ 9 դասուած սպանացի Ռաֆայէլ Նատալին 6-4, 3-6, 6-1, 3-6, 6-3 հաշիւով եւ շահեցաւ իր 18-րդ «Մեծ Սաղաւարտ»ի տիտղոսը:

Կիներու աւարտական մրցումին, ամերիկացի թիւ 2 դասուած Սերենա Ուիլիըմզ յաղթեց իր քրոջ թիւ 13 դասուած Վինըս Ուիլիըմզին 6-4, 6-4 հաշիւով ու շահեցաւ իր 23-րդ «Մեծ Սաղաւարտ»ի տիտղոսը, այդ ձեւով կտրելով գերմանացի Շթեֆի Կրաֆի մրցանիշը՝ 22 տիտղոս:

Ֆրանսայի Բաց Մրցաշարք

Օսթափենքօ Եւ Նատալ Շահեցան Տիտղոսները

Այս տարուան թենիսի «Մեծ Սաղաւարտ»ի երկրորդ մրցաշարքին՝ Ֆրանսայի բաց մրցաշարքի տղոց արտական մրցումին, թիւ 4 դասուած սպանացի Ռաֆայէլ Նատալ յաղթեց թիւ 3 դասուած գուլիցերիացի Սթան Վալդիքային 6-2, 6-3, 6-1 հաշիւով եւ շահեցաւ իր 10-րդ Ֆրանսայի բաց մրցաշարքի տիտղոսը: Այս մէկը մրցանիշ մըն է: Նատալ 2-րդ դիրքը գրաւեց թենիսի արհեստավարժներու դասաւորման մէջ, մինչ ճոքովիչ նահանջեց 4-րդ դիրքը:

Իսկ կիներու աւարտական մրցումին, լաթվիացի չղասուած մարզիկուհի Ելենա Օսթափենքօ շահեցաւ իր առաջին «Մեծ սաղաւարտ»ի տիտղոսը յաղթելէ ետք թիւ 3 դասուած ռումանացի Սիմոնա Յալէփին 4-6, 6-4, 6-3 հաշիւով, շնորհիւ իր զօրաւոր հարուածներուն-winner:

Ուիմպլըտընի Մրցաշարք

Մուկուրուզա Եւ Ֆետերեր Շահեցան Տիտղոսները

Ուիմպլըտընի մրցաշարքի կիներու աւարտական հանգրուանին, թիւ 14 դասուած սպանացի Կարպին Մուկուրուզա յաղթեց թիւ 10 դասուած ամերիկացի Վինըս Ուիլիըմզին 7-5, 6-0 հաշիւով եւ շահեցաւ իր առաջին Ուիմպլըտընի տիտղոսը:

Չոյգ տղոց մրցումին ախոյեան դարձաւ թիւ 4 դասուած Մելօ-Զիւպոթ գոյգը, որ յաղթեց թիւ 16 դասուած Մարաչ-Փալիչ գոյգին 5-7, 7-5, 7-6, 3-6, 13-11 հաշիւով:

Չոյգ կիներու մրցումին ախոյեան դարձաւ թիւ 2 դասուած ռուս Մաքարովա-Վեզնինա զոյգը, որ յաղթեց թիւ 9 դասուած Նիքոլետսքու-Չան զոյգին 6-0, 6-0 հաշիւով:

Տոյգ աւարտական մրցումին, թիւ 3 դասուած զուկցերիացի Ռոմէ Ֆետերեր յաղթեց թիւ 7 դասուած խրուաթ Մարին Չիլիչին 6-3, 6-1, 6-4 հաշիւով եւ շահեցաւ իր 8-րդ Ռիփմայրլտընի տիտղոսը, որ մրցանիշ մըն է: Այս նաեւ իր 19-րդ «Մեծ սաղաւարտ»ի տիտղոսն էր, որ նաեւ մրցանիշ մըն է:

### ԱՄՆ-ի Բաց Մրցաշարք

## Սթեֆընզ Եւ Նատալ Տիտղոսակիր



Կիներու աւարտական հանգրուանի մրցումը ամերիկացի Սլոն Սթեֆընզի եւ 15-րդ դասուած ամերիկացի Մետիսըն Զիգի միջեւ եւ աւարտեցաւ Սթեֆընզի 6-3, 6-0 հաշիւով յաղթանակով: Սլոն Սթեֆընզ արժանիօրէն շահեցաւ իր առաջին «Մեծ Սաղաւարտ»ի տիտղոսը:

Իսկ տղոց աւարտական հանգրուանին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը-փակագիծերու մէջ մարզիկին դասաւորումը.

- Ռաֆայլ Նատալ (1) - Զեվին Էնտերսընս (28) 6-3, 6-3, 6-4

սպանացի աշխարհի թիւ 1 Ռաֆայել Նատալ յաղթեց հարաւ ափրիկեցի Զեվին Էնտերսընին եւ շահեցաւ իր երրորդ ԱՄՆ-ի Բաց Մրցաշարքի տիտղոսը:

### Կիներու Մասթրզի Աւարտական

## Վոզնիաքի Տիտղոսակիր

Թենիսի կիներու այս տարուան մասթրզի աւարտական մրցաշարքին տիտղոսը շահեցաւ թիւ 6 դասուած ղանիացի Զարուիկա Վոզնիաքի, որ աւարտական մրցումին յաղթեց ամերիկացի թիւ 5 դասուած Վիլքս Իւլիլիմզի 6-4, 6-4 հաշիւով:

### Մասթրզի Աւարտական Մրցաշարք

## Կրիկոր Տիտղոսակիր Շահեցաւ Տիտղոսը

Լոնտոնի մէջ տեղի ունեցաւ այս տարուան թենիսի մասթրզի աւարտական մրցաշարքի աւարտական մրցումը: Պուլկարացի Կրիկոր Տիտղոսակիր տարաւ արժանի յաղթանակ մը պելճիքացի Տաւիտ Կոֆէնի դէմ 7-5, 4-6, 6-3 հաշիւով ու շահեցաւ իր առաջին մասթրզի աւարտական տիտղոսը:

### Տեյվիս Բաժակ

## Ֆրանսայի 10-րդ Տիտղոսը

Թենիսի տղոց խմբային բաժակի 2017-ի աւարտական մրցումը տեղի ունեցաւ Ֆրանսայի եւ Պելճիքայի հաւաքականներուն միջեւ: Ֆրանսա յաղթեց 3-2 մրցումներու հաշիւով եւ ապահովեց տիտղոսը: Պելճիքացի Տաւիտ Կոֆէն տարաւ երկու յաղթանակ: Մինչ ֆրանսացի Ճո Ուիլֆրետ Յոնկա տարաւ մէկ յաղթանակ, ֆրանսացի Կասքէ-Յերպեր զոյգը յաղթեց պելճիքացի Պեմելմանս-Տէ Լուր զոյգին, իսկ ֆրանսացի Լուքաս Փոյ յաղթեց պելճիքացի Սթիվ Տարսիսին Ֆրանսային շնորհելով իր 10-րդ տիտղոսը:

### Տեյվիս Բաժակ

## Լիբանան Բ.Դասակարգին Մէջ

Յաջող սերնդափոխութենէ ետք, Լիբանանի տղոց «Տեյվիս բաժակ»ի հաւաքականը կրցաւ ապահովել Ասիա-Ովկիանիա գօտիի Բ.դասակարգ բարձրանալու երկու տոմսերէն մէկը: Սրի Լանքայի մէջ տեղի ունեցած երրորդ դասակարգի գտումի մրցումներուն, ուր մասնակցող ինը հաւաքականները բաժնուեցան երկու խմբակներու: Լիբանան երկրորդ խմբակին մէջ մրցեցաւ Զաթարի, Մալեգիոյ, Արաբական Միացեալ Էմիրութեան եւ Թիւրքմենիստանի հաւաքականներուն դէմ: Արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Լիբանան - Մալեգիա 2-1, - Լիբանան - Զաթար 3-0
- Լիբանան - Արաբ.Միաց.Էմիր. 2-1, - Լիբանան - Թիւրքմենիստան 2-1

Լիբանանի հաւաքականը գրաւեց 2-րդ խմբակին առաջին դիրքը եւ մրցեցաւ Ա.խմբակի 2-րդ դիրքը գրաւած Յորդանանի հաւաքականին դէմ եւ յաղթեց 2-0 հաշիւով ու բարձրացաւ Ասիա-Ովկիանիա գօտիի 2-րդ դասակարգ: Լիբանանի հաւաքականը կը բաղկանար հետեւեալ մարզիկներէն՝ Ծիփանի Սըմահա, Յատի Յապիպ, Նաժիպ Ֆաքիի եւ Ժատ Պալլուս: Մարզիչն է Յըսէյն Պատրըտտին: Սրի Լանքան ալ յաղթեց Զաթարին 2-0 հաշիւով ու բարձրացաւ 2-րդ դասակարգ: Չորրորդ դասակարգ իջնելէն խուսափելու մրցումներուն, Փասիֆիքի հաւաքականը յաղթեց Թիւրքմենիստանին 2-1 հաշիւով, իսկ Սուրիա յաղթեց Արաբ.Միացեալ Էմիրութեան 2-0 հաշիւով: Երկու պարտուող հաւաքականները հրաժեշտ տուին 3-րդ դասակարգին:

## Սեղանի Թենիս

### Ասիոյ Ախոյեանութիւն

## Լիբանանի Աղջիկները Գրաւեցին 17-րդ Դիրքը

Ասիոյ սեղանի թենիսի ախոյեանութեան մրցումներու առաջին հանգրուանին Լիբանանի աղջիկները յաղթեցին Փաքիստանին 3-1 մրցումներու հաշիւով եւ Յորդանանին՝ 3-2 հաշիւով: Պարտուեցան միայն Ղազախստանէն 1-3 հաշիւով: Խումբը գրաւեց խմբակին երկրորդ դիրքը եւ անցաւ երկրորդ փուլ: Այս փուլին յաղթեցին Մոնկոլիային 3-2 հաշիւով եւ զիջեցան Վիետնամին 1-3 հաշիւով: Ընդհանուր դասաւորման մէջ Լիբանան գրաւեց 17-րդ դիրքը: Աղջիկներու հաւաքականին մաս կը կազմեն Մարիանա Սահակեան եւ Նոել Զէշիշեան:

Իսկ տղոց մրցումներուն, Լիբանան յաղթեց միայն Մալտիվ կղզիներու խումբին 3-2 հաշիւով: Խումբը պարտուեցաւ Յիւսիսային Զորեայէն, Մոնկոլիայէն, Մաքաոյէն եւ Օմանէն ու չի հասաւ երկրորդ փուլ: Լիբանան գրաւեց 26-րդ դիրքը ընդհանուր դասաւորման մէջ:

### Արաբական Ախոյեանութիւն

## Վեց Պրոնզէ Եւ Երկու Արծաթ Մետալներ

Սեղանի թենիսի արաբական երկիրներու ախոյեանութեան մրցումները աւարտեցան Օմանի մէջ: Լիբանանի պատանիները եւ երիտասարդները շահեցան երկու արծաթ եւ 6 պրոնզէ մետալներ:

Մարիանա Սահակեան շահեցաւ կիներու դասակարգի պրոնզէ մետալը: Մինչեւ 18 տարեկան դասակարգին մէջ Ղալեպ ֆահրս շահեցաւ պրոնզէ մետալը: Նոյն դասակարգի զոյգի մրցումին արծաթ մետալ շահեցան Ղալեպ ֆահրս եւ Յասան Շապիպ: Մինչեւ 15 տարեկան աղջիկներու զոյգի մրցումին պրոնզէ մետալ շահեցան Լեթիսիա Ազար եւ Մարիամ Ալի հապաշ: Մինչեւ 12 տարեկան տղոց մրցումին պրոնզէ մետալ շահեցաւ Ալէքս Պուսթանին: Մինչեւ 12 տարեկան աղջիկներու մրցումին արծաթ մետալ շահեցաւ Թալիա Ազարը: Մինչեւ 12 տարեկան տղայ եւ աղջիկ զոյգերու մրցումներուն լիբանանցիները շահեցան պրոնզէ մետալները:

### Լիբանանի Խմբային Ախոյեանութիւն

## Ալ Նատուա Եւ Ալ Ժընուպ Տիտղոսակիր

«Մոն Լա Սալ» ակումբի սեղաններուն վրայ աւարտեցան սեղանի թենիսի Լիբանանի խմբային ախոյեանութեան մրցումները: Աղջիկներու ախոյեանութեան առաջին դիրքը գրաւեց Զմաթիէի «Ալ Նատուա» ակումբը, աւարտական մրցումին յաղթելով «Յ.Մ.Ը.Մ. Պէյրութ» ակումբին 3-0: Այս «Ալ Նատուա»ի երրորդ անընդմէջ տիտղոսն էր: «Ալ Նատուա»ին մաս կը կազմեն Լիբանանի ախոյեան Մարիանա Սահակեանը, Մալաք Խուրին եւ Մարիամ Ալ Յապաշը: «Յ.Մ.Ը.Մ.»ի մաս կազմեցին Լարա Զէչէպաշեանը, Նոել Զէշիշեանը եւ Միրէյ Պոյաճեանը:

Տոյգ մրցաշարքի առաջին դիրքը գրաւեց Թուրքի «Ալ Ժընուպ»ը աւարտական մրցումին յաղթելէ ետք «Ալ Ֆատի Ալ Աքրաս» խումբին 3-0 մրցումներու հաշիւով: «Յ.Մ.Ը.Մ. Պէյրութ» գրաւեց 5-րդ դիրքը, իսկ «Անդրանիկ Պէյրութ»՝ 6-րդ դիրքը:

### Հայաստանի Ախոյեանութիւն

## Վարդանեան Եւ Ղուկասեան Շահեցան Տիտղոսները

Երեւանի «Հայաստան» մարզական միութեան դահլիճին մէջ աւարտեցան հայաստանի սեղանի թենիսի ախոյեանութեան մրցումները:

Տոյգ տիտղոսը շահեցաւ Մեսրոպ Ղուկասեանը, որուն մարզիչն է Ֆելիքս Սարգսեանը, իսկ աղջիկներուն տիտղոսը շահեցաւ Ռուբինա Վարդանեանը, որուն մարզիչն է Արսէն Աբրահամեանը: Չոյգերու մրցումին տղոց տիտղոսը շահած է Ալէքսանտր Տիարեան եւ Վարուժան Պաղտասարեան զոյգը, իսկ կիներու տիտղոսին արժանացած է Ռուբինա Վարդանեան եւ Խոճակորեան զոյգը: Ախոյեանութեան մասնակցած են 64 մարզիկներ Արցախէն, Կիւմրիէն, Վանաձորէն եւ Երեւանէն:

## Ճատրակ

### Աշխարհի Բաժակ

## Լեւոն Արոնեանի Երկրորդ Տիտղոսը



Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մեջ շարունակուեցան ճատրակի աշխարհի բաժակի մրցումները: Աւարտական հանգրուանի չորրորդ մրցումին, Լեւոն Արոնեան սեւ քարերով հաւասարեցաւ չինացի Տիեյ Լիւնի հետ: Դասական ճատրակի մրցաշարքին արդիւնքը դարձաւ 2-2: Թայ պրէյքի յաւելեալ մրցումներու արագ ճատրակի առաջին մրցումին, Լեւոն Արոնեան առաջին երկու մրցումներուն յաղթանակ տարաւ եւ հաշիւը դարձաւ 4-2: Ան շահեցաւ ճատրակի աշխարհի բաժակի տիտղոսը 2005-էն ի վեր առաջին անգամ ըլլալով: Ան դարձաւ ճատրակի առաջին վարպետը, որ երկրորդ անգամ ըլլալով կը շահի բաժակի տիտղոսը: Ան Մարտ 10-էն 28, 2018-ին պիտի մասնակցի աշխարհի ախոյեանութեան յաւակնորդներու մրցաշարքին:

### Աշխարհի Կիներու Ախոյեանութիւն

## Չինացի Չժունչի Ախոյեան

Իրանի մայրաքաղաք Թեհրանի մեջ աւարտեցաւ աշխարհի կիներու ախոյեանութեան մրցաշարքը: Մրցաշարքը սկսաւ աշխարհի ամենալաւ 64 կին վարպետներով: Մրցակիցները իրարու դէմ մրցեցան երկու անգամ պարտուողը դուրս ելլելու դրութեամբ: Աւարտական հասան չինացի վարպետ Տան Չժունչին եւ ուլբանացի Աննա Մուզիչուքը: Առաջին մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ, սակայն երկրորդ մրցումի 39-րդ քայլին Մուզիչուք սխալ քայլ մը կատարեց եւ պարտուեցաւ: Այսպիսով Տան Չժունչի շահեցաւ աշխարհի ախոյեանութեան տիտղոսը:

### Եւրոպայի Խմբային Ախոյեանութիւն

## Հայաստան Գրաւեց 12-րդ Եւ 9-րդ Դիրքերը

Յունաստանի Կրետե կղզիի Զերսոն քաղաքին մեջ աւարտեցան ճատրակի Եւրոպայի խմբային ախոյեանութեան մրցումները: Մրցաշարքը կը բաղկանար ինը հանգրուաններէ: Վերջին հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Բաց մրցաշարքի 9-րդ հանգրուան. Հայաստան - Սերպիա 2-2
- Ատրպէյճան - Ուլբանիա 2-2, Գերմանիա - Ռուսիա 1-3
- Սարգիսեան յաղթեց, Մովսէսեան եւ Մելքումեան հաւասարեցան, Գաբուզեան պարտուեցաւ: Հայաստան գրաւեց 12-րդ դիրքը 40 հաւաքականներու մէջ: Խումբը արձանագրեց 3 յաղթանակ, 4 հաւասարութիւն եւ 2 պարտութիւն:
- Վերջնական դասաւորում. 1-Ատրպէյճան 14 կէտ յաւելեալ ցուցանիշ 230, 2-Ռուսիա 14 կէտ 217.5, 3-Ուլբանիա 13 կէտ 210, 12-Հայաստան 10 կէտ 179: Աղջիկներու Մրցաշարքի
- 9-րդ հանգրուան. Հայաստան - Ռուսիա 0.5-3.5
- Վրաստան - Իտալիա 3.5-0.5, Ռումանիա - Լեհաստան 3-1
- Կալոյեան հաւասարեցաւ, Դանիէլեան, Սկրտչեան եւ Գեորգեան պարտուեցան: Հայաստան արձանագրեց 5 յաղթանակ, 1 հաւասարութիւն, 3 պարտութիւն: Խումբը գրաւեց 9-րդ դիրքը 32 հաւաքականներու մէջ:
- Վերջնական դասաւորում. 1-Ռուսիա 17 կէտ 258, 2-Վրաստան 14 կէտ 251, 3-Ուլբանիա 13 կէտ 223.5, 9-Հայաստան 11 կէտ 147.5:

Ճատրակի Եւրոպայի խմբային ախոյեանութեան թեւեւ Հայաստանի տղաքը գրաւեցին 42-րդ դիրքը, սակայն Լեւոն Արոնեան որպէս թիւ մէկ շահեցաւ ամենաշատ կէտը առաջին խաղատախտակին վրայ եւ շահեցաւ ոսկիէ մետալը, իսկ Գաբրիէլ Սարգիսեան շահեցաւ թիւ 3 խաղատախտակին արծաթէ մետալը:

### Աշխարհի Երիտասարդական Ախոյեանութիւն

## Մանուէլ Պետրոսեան Փոխ Ախոյեան

Իտալիոյ Թարվիզիո քաղաքին մեջ աւարտեցան ճատրակի աշխարհի երիտասարդական ախոյեանութեան մրցումները: Սկիզբի միջակ արդիւնքներէն ետք, Հայաստանի երիտասարդ վարպետ Մանուէլ Պետրոսեան գերազանց արդիւնքով աւարտեց ախոյեանութիւնը եւ շահելով 8,5 կէտ 11 հանգրուան ետք կէտերով հաւասարեցաւ Նորվեգիացի Թարիան Արիի հետ եւ միայն յաւելեալ ցուցանիշով գրաւեց 2-րդ դիրքը եւ դարձաւ աշխարհի փոխ ախոյեան: Ստորեւ տեսնել մրցաշարքի վերջնական դասաւորումը.

- 1-Թարի Արիան-Նորվեգիա 8,5 կէտ յաւելեալ ցուցանիշ 72
- 2-Մանուէլ Պետրոսեան-Հայաստան 8,5 կէտ, 67
- 3-Չիթամպարամ Արավինտ-Յնդկաստան 8,5 կէտ, 66
- 16-Հայկ Մարտիրոսեան-Հայաստան 7,5 կէտ
- 43-Տիգրան Յարութիւնեան-Հայաստան 6,5 կէտ
- Աղջիկներու դասաւորում.
- 1-Ժանսայա Ապտումալիբ-Ղազախստան 9,5 կէտ յաւելեալ ցուցանիշ 71,5
- 2-Անասթազիա Փարամզինա-Ռուսիա 8,5 կէտ, 70,5
- 3-Ճենիֆըր Եու-ԱՄՆ 8 կէտ, 69
- 41-Սիրանուշ Ղուկասեան-Հայաստան 5,5 կէտ

### Ամերիկայի Անհատական Ախոյեանութիւն

## Սամուէլ Սեւեան Ախոյեան

Ամերիկայի 16-ամեայ ճատրակի վարպետ Սամուէլ Սեւեան շահեցաւ Ամերիկայի անհատական ախոյեանութեան տիտղոսը: Ան վերջին՝ 11-րդ հանգրուանին հաւասարեցաւ փերուցի Խորխէ Կորիի հետ: Ութ վարպետներ շահեցան 8.5 կէտ, սակայն սամուէլ յաղթանակեց յաւելեալ ցուցանիշներով-tie breaks: Ուրիշ հայ վարպետ մը, պրագիլահայ Գրիգոր Միխիթարեան 7 կէտով գրաւեց 35-րդ դիրքը:

### Եւրոպայի Պատանեկան Ախոյեանութիւն

## Սոնա Ասատրեան Տիտղոսակիր

Ռումանիոյ Մամայա քաղաքին մեջ աւարտեցան ճատրակի Եւրոպայի պատանեկան ախոյեանութեան մրցումները: Հայաստանի ամենալաւ արդիւնքը ապահովեց աղջիկներու մինչեւ 18 տարեկան դասակարգին մէջ Սոնա Ասատրեանը, որ շահելով 7 կէտ 9 հանգրուանէ գրաւեց իր դասակարգին առաջին դիրքը:

### Լիբանանի Պատանեկան Ախոյեանութիւն

## Գալուստ Եւ Գրիգորեան Շահեցան Տիտղոսները

Լիբանանի ճատրակի ֆետերասիոնը կազմակերպեց պատանեկան ախոյեանութեան մրցումները «Արարատ Մարզական Միութեան» սրահին մէջ: Տարբեր տարիքային մրցաշարքերուն վերջնական դասաւորումը հետեւեալն է.

- Տղաք.
- 16 տարեկան. 1-Ճորճիո Գալուստ, 2-Ժ.Ֆարիաթ, 3-Մ.Ֆըրզլի
- 14 տարեկան. 1-Գ.Պուլոս, 2-Հրակ Լախեան, 3-Խ.Ֆաքքուհա
- 12 տարեկան. 1-Մ.Ալ ժաուիշ, 2-Ժ.Համտուն, 3-Պ.Քասսար
- Աղջիկներ.
- 12 տարեկան. 1-Փաթիլ Գրիգորեան, 2-Ռ.Սալլում, 3-Ե.Սաատ
- Մրցումները կը շարունակուին:

## Յեժեկարշաւ

### Ֆրանսայի Շրջավազ

## Քրիսթոֆըր Ֆրում Տիտղոսակիր

Ֆրանսայի 104-րդ շրջավազը հասաւ իր աւարտին: Վերջին՝ 21-րդ հանգրուանը տեղի ունեցաւ Կիրակի օր: Ան 103 քիլոմետր հեռաւորութեամբ մրցում մըն էր Մոնժերոնէն Փարիզ: «Լոթթօ Ճամպօ» խումբի հոլանտացի Տիլըն Կրոնսվեկըն յաղթանակ տարաւ, հեռաւորութիւնը կտրելով 2:25.39 ժամէն: Երկրորդ դիրքը գրաւեց «Լոթթօ Սուտալ» խումբի գերմանացի Անտրէ Կրայիլը, Նոյն ժամանակով, իսկ երրորդ դիրքը գրաւեց «Թիմ Տայմենշըն Տաթա» խումբի նորվեգիացի Էտվալտ Պոասըն Հակընը, Նոյն ժամանակով: Առաջատարները մնալով առաջին խումբին մէջ պահեցին իրենց դիրքերը եւ Քրիսթոֆըր Ֆրում շահեցաւ իր 4-րդ Ֆրանսայի շրջավազի տիտղոսը: Ստորեւ տեսնել վերջնական դասաւորումը 21 հանգրուան ետք.

- 1-Քրիսթոֆըր Ֆրում-Բրիտանիա, Աքայ Թիմ, 86:20.55 ժամ
- 2-Ռիկուպերթօ Ուրան-Քոլումբիա, Քենընտէյլ, 54 երկվ.ուշ
- 3-Ռոմէն Պարտէ-Ֆրանսա, Լա Մոնտիալ, 2.20 վրկ.ուշ

### Աթլետիկա



Աթլետիկայի այս տարուան ամենակարեւոր լուրը ճամայթացի աշխարհի կարճ վազքի ախոյեան եւ մրցանիշակիր Եւոժին Պոլթի հեռնալն Եր աստարեզէն: Պոլթ իրաւամբ կը համարուի 21-րդ դարու ամենաազդեցիկ մարզիկներէն մէկը իր համեստութեամբ, կորովով եւ արձանագրած յաղթանակներու թիւով: Պիտի փնտռենք զինք:

### Աղամանդէ Լիկա

#### Թոմփսըն եւ Շիփըրզ Տիտղոսակիր

Աթլետիկայի միջազգային ֆետերասիոնը-iaaf հրապարակեց այս տարուան Աղամանդէ Լիկայի մրցաշարքի տարբեր մրցումներու վերջնական դասաւորումը: Ստորեւ տեսնել տարբեր մրցումներու դասաւորումը.

- Կիներ
  - 100 մետր վազք. 1-Էլէն Թոմփսըն-Ճամայթա 40 կետ, 2-Մարի ժոզէ Թալու-Փղ.Ափունք 34 կետ, 3-Պլեսինկ Օքակար-Նիկերիա 22 կետ
  - 200 մետր վազք. 1-Տաֆնի Շիփըրզ-Յոլանտա 28 կետ, 2-Մարի ժոզէ Թալու-Փղ.Ափունք 24 կետ, 3-Միլիլի Կիլուրէ-Փղ.Ափունք 15 կետ
  - 400 մետր վազք. 1-Նովլէն Ուիլիզմ-Ճամայթա 34 կետ, 2-Նաթաշա Յեսթինկ-ԱՄՆ 25 կետ, 3-Զորթնի Օքոլո-ԱՄՆ 23 կետ
  - 800 մետր վազք. 1-Ֆրանսին Նիոնսապա-Պուրուսոյի 36 կետ, 2-Զասթըր Սեմեկիա-Յար.Ափրիկէ 32 կետ, 3-Մարկարթե Ուանպուի-Բենիա 20 կետ
  - 1500 մետր վազք. 1-Անժելիքա Սիչոսքա-Լեհաստան 27 կետ, 2-Ուիլի Չեյթ-Բենիա 23 կետ, 3-Ռապապ Արաֆի-Մարոք 22 կետ
  - 5000 մետր վազք. 1-Յելէն Օպիրի-Բենիա 29 կետ, 2-Մարկարթե Բիփքեմայոյ-Բենիա 13 կետ, 3-Լեթեսեմպէթ Կիտէ-Եթովպիա 12 կետ
  - 100 մետր արգելարշաւ. 1-Շարիքա Նելվիս-ԱՄՆ 31 կետ, 2-Բենտրա Յերիսըն-ԱՄՆ 24 կետ, 3-Բրիսթինա Մենիկ-ԱՄՆ 21 կետ
  - 400 մետր արգելարշաւ. 1-Սուզանա Յեյնովա-Չեխիա 25 կետ, 2-Էտիթ Տոյլ-Բրիտանիա 17 կետ, 3-Էլի Սփենսըր-ԱՄՆ 16 կետ
  - 3000 մետր արգելարշաւ. 1-Յիվին Ճեփքեմայոյ-Բենիա 15 կետ, 2-Պեթրիս Չեփքեմայոյ-Բենիա 15 կետ, 3-Նորա Թանուի-Բենիա 15 կետ:

### Լող

#### Աշխարհի Ախոյեանութիւն

#### ԱՄՆ, Չինաստան եւ Ռուսիա Առաջատար

Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափեշթի մէջ աւարտեցան աշխարհի լողի ախոյեանութեան մրցումները: Լողարշաւի մրցումներուն ԱՄՆ մնաց տիրապետող հաւաքականը: Ջրագնդակի մրցումներուն, ԱՄՆ եւ Խրուաթիա շահեցան կիներու եւ տղոց տիտղոսները: Ստորեւ տեսնել վերջին օրերուն արձանագրուած արդիւնքները.



- Լողարշաւ
  - Կիներու 200 մ կուրծք լող. 1-Եուլիա Էֆիմովա-Ռուսիա 2:19.64 վրկ.
  - Կիներու 800 մ ազատ լող. 1-Բեյթի Լետըքի-ԱՄՆ 8:12.68 վրկ.
  - Կիներու 50 մ թիթեռնիկ լող. 1-Սառա Սիոսթրոմ-Շուէտ 24.60 երկվ.
  - Ախոյեանութեան Նոր մրցանիշ
    - Կիներու 200 մ կռնակ լող. 1-Էմիլի Սիպոմ-Աւստրալիա 2:05.68 վրկ.
    - Կիներու 50 մ ազատ լող. 1-Սառա Սիոսթրոմ-Շուէտ 23.69 երկվ.
    - Կիներու 400 մ չորս լող. 1-Զաթինքա Յոսշու-Յունգ. 4:29.33 վրկ.
    - Կիներու 50 մ կռնակ լող. 1-Լիլի Բինկ-ԱՄՆ 29.40 երկվ.
  - Աշխարհի Նոր մրցանիշ
    - Կիներու 4x100 մ չորս լող. 1-ԱՄՆ 3:51.55 վրկ. 2-Ռուսիա 3:55.38 վրկ., 3-Աւստրալիա 3:54.29 վրկ. Աշխարհի Նոր մրցանիշ
      - Տղոց 200 մ կուրծք լող. 1-Անթոն Չուփքով-Ռուսիա 2:06.96 վրկ.
  - Եւրոպայի եւ մրցաշարքի Նոր մրցանիշ
    - Տղոց 200 մ կռնակ լող. 1-Եվկենի Ռիլով-Ռուսիա 1:53.61 վրկ.

- Եւրոպայի Նոր մրցանիշ
  - Տղոց 4x200 մ դրօշարշաւ. 1-Բրիտանիա 7:01.70 վրկ. 2-Ռուսիա 7:02.68 վրկ., 3-ԱՄՆ 7:03.18 վրկ.
  - Տղոց 100 մ թիթեռնիկ լող. 1-Զալէպ Տրետըլ-ԱՄՆ 49.86 երկվ.-
  - Խառն 4x100 մետր ազատ լող. 1-ԱՄՆ 3:19.60 վրկ, 2-Յոլանտա 3:21.81, 3-Բանատա 3:23.55, Աշխարհի Նոր մրցանիշ
    - Տղոց 1500 մ ազատ լող. 1-Կրեկորիո Փալթրիսիերի-Իտալ. 14:35.85 վրկ.
    - Տղոց 50 մ կռնակ լող. 1-Զամիլ Լաքուրթ-Ֆր. 24.35 երկվ.
    - Տղոց 400 մ չորս լող. 1-Չեյս Զալիշ-ԱՄՆ 4:05.90 վրկ.
    - Տղոց 4x100 մ չորս լող. 1-ԱՄՆ 3:27.91 վրկ. 2-Բրիտանիա 3:28.95 վրկ., 3-Ռուսիա 3:29.76 վրկ.

- Ջրագնդակ
  - Կիներու աւարտական հանգրուանի արդիւնքներ. Աւարտական. ԱՄՆ - Սպանիա 13-6
  - 3-րդ դիրք. Ռուսիա - Բանատա 11-9
  - Տղոց աւարտական հանգրուանի արդիւնքներ. Աւարտական. Խրուաթիա - Յունգարիա 8-6
  - 3-րդ դիրք. Սերպիա - Յունաստան 11-8
- Ջրացատկ
  - Կիներու 20 մետր. 1-Ռիանան Իֆլէնտ-Աւստրալիա 320.70 կետ
  - Տղոց 27 մետր. 1-Սթիվ Լոպու-ԱՄՆ 397.15 կետ

Մետալներու վերջնական դասաւորումը 17 օր ետք.

1-ԱՄՆ	21	ոսկի,	12	արծաթ,	13	պրնգ,	46	մետալ
2-Չինաստան	12,	12,	6,	30				
3-Ռուսիա	11,	6,	8,	25				
4-Ֆրանսա	6,	1,	2,	9				
5-Բրիտանիա	5,	3,	3,	11				

### Գեղասահք figure skating

#### Եւրոպայի Ախոյեանութիւն

#### Գալուստեան՝ 12-րդ



Եւրոպայի գեղասահքի ախոյեանութեան կիներու անհատական մրցումին, կարճ ծրագիրէն ետք Յայաստանի ներկայացուցիչ Անասթազիա Գալստեանը գրաւեց 10-րդ դիրքը, սակայն ազատ վարժութեան մրցումին ան գրաւեց 14-րդ դիրքը եւ ընդհանուր դասաւորման մէջ գրաւեց 12-րդ դիրքը:

Չոյգերու պարի մրցումին, Յայաստանը ներկայացնող Թինա Կարապետեան-Սիմոն Սենեկալ զոյգը կարճ ծրագիրէն ետք գրաւեց 16-րդ դիրքը, սակայն ազատ ծրագիրէն ետք նահանջեց եւ գրաւեց 19-րդ դիրքը:

Տղոց անհատական մրցումին, Յայաստանի ներկայացուցիչ Սլավիկ Յայրապետեան կարճ ծրագիրէն ետք գրաւեց 21-րդ դիրքը: Ազատ ծրագիրէն ետք ան գրաւեց 22-րդ դիրքը:

### Ըմբշամարտ

#### Աշխարհի Ախոյեանութիւն

#### Արթուր Ալեքսանեան Եռակի Ախոյեան

Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ սկսած աշխարհի յունահռոմեական ոճի ըմբշամարտի ախոյեանութեան մրցումներուն, Ողիմպիական Խաղերու ախոյեան, 98 քկ. դասակարգի Յայաստանի ներկայացուցիչ Արթուր Ալեքսանեան աւարտական մրցումին յաղթեց ռուս Մուսա Եւլտեյին 3-1 հաշիւով եւ շահեցաւ աշխարհի ախոյեանութեան տիտղոսը երրորդ անգամ ըլլալով 2014-էն եւ 2015-էն ետք:



80 քկ. դասակարգին մէջ, Մաքսիմ Մանուկեան յաղթեց իր բոլոր մրցակիցներուն եւ հասաւ աւարտական հանգրուան, ուր յաղթելով պէլառուս Ռադիկ Կուլիեյին 5-0 հաշիւով ապահովեց Յայաստանի երկրորդ ոսկիէ մետալը:

66 քկ. դասակարգին մէջ, Կարէն Ասլանեան քառորդ աւարտական հանգրուանին պարտուեցաւ քորէացի Յանսու Ռիոյէն 1-2 հաշիւով:

59 քկ. դասակարգին մէջ, 1/8-րդ աւարտական հանգրուանին պարտուեցաւ 0-8 հաշիւով պարտուեցաւ ճաբոնցի Կենիչիթո Ֆումիթայէն:

Յայաստանի յունահռոմեական ոճի ըմբշամարտի հաւաքականը, զոր կը մարզէ Լեոն Ճուլֆալաքեանը, ապահովեց 28 կետ եւ գրաւեց 6-րդ դիրքը ընդհանուր դասաւորումին մէջ:

### Բռնցքամարտ

#### Եւրոպայի Ախոյեանութիւն

### Յովհաննէս Պաչքով Տիտղոսակիր

Ուքրանիոյ Խարքով քաղաքին մէջ աւարտեցան Եւրոպայի բռնցքամարտի ախոյեանութեան մրցումներու աւարտական հանգրուանի մրցումին, 64 քկ. դասակարգին մէջ Հայաստանի ներկայացուցիչ Յովհաննէս Պաչքով 5-0 ռաունտերու հաշիւով յաղթեց անգլիացի Լիւք Մաքքորմաքին եւ դարձաւ Եւրոպայի ախոյեան:

### Թաէքուոնտո

#### Լիբանանի Կարմիր Գօտիի Ախոյեանութիւն

### Անդրանիկ Ախոյեան

Տըքուէնիի «Էմիլ Լահուտ» մարզասրահին մէջ տեղի ունեցաւ թաէքուոնտոյ կարմիր գօտիի ախոյեանութիւնը տղոց, երիտասարդներու, պատանիներու եւ փոքրերու դասակարգերուն մէջ, մասնակցութեամբ բոլոր ակումբներուն: Խմբային դասաւորումին առաջին դիրքը գրաւեց «Անդրանիկ»ը, երկրորդ՝ «Լուայգէ»ն, երրորդ՝ «Լիուա Ռաֆիտ»ը:

#### Եւրոպայի Պատանեկան Ախոյեանութիւն

### Հայաստան ճահեցաւ Երկու Մետալներ

Կիպրոսի Լառնաքա քաղաքին մէջ տեղի ունեցան Եւրոպայի պատանեկան ախոյեանութեան մրցումները: 59 քկ. դասակարգին մէջ, Ռոման Հայրապետով գրաւած է երկրորդ դիրքը եւ շահած է արծաթե մետալը: Իսկ 68 քկ. դասակարգին մէջ Անդրանիկ Խաչատրեան գրաւեց երրորդ դիրքը եւ շահեցաւ պրոնզէ մետալը: Հայաստանի թաէքուոնտոյի հաւաքականի մարզիչն է Չօրայր Մեկինեան:

### Ճիւտո

#### Եւրոպայի Երիտասարդական Ախոյեանութիւն

### Գրիգոր Սահակեան՝ 3-րդ

Սլովենիոյ Մարիպոր քաղաքին մէջ տեղի ունեցող ճիւտոյի Եւրոպայի երիտասարդական ախոյեանութեան մրցումներուն Հայաստանի հաւաքականէն 90 քկ. դասակարգին մէջ մրցող Գրիգոր Սահակեան գրաւած է երրորդ դիրքը եւ շահած պրոնզէ մետալը:

### Ճանրամարտ

#### Եւրոպայի Ախոյեանութիւն

### Մէկ Ոսկիէ, Մէկ Արծաթ Եւ Երկու Պրոնզէ Մետալներ

Խրուաթիոյ Սփլիթ քաղաքին մէջ տեղի ունեցող Եւրոպայի ճանրամարտի ախոյեանութեան մրցումներուն Հայաստան շահեցաւ իր երկրորդ պրոնզէ մետալը:

19 տարեկան Սոնա Պօղոսեան առաջին մետալը նուիրեց Հայաստանին, Եւրոպայի ճանրամարտի ախոյեանութեան մրցումներուն: 75 քկ. դասակարգին մէջ ան 227 քկ. երկամարտի գումարով գրաւեց 3-րդ դիրքը եւ շահեցաւ պրոնզէ մետալը:

Կիներու 90 քկ. դասակարգին մէջ Տաթև Յակոբեան պոկում վարժութեան մէջ արձանագրեց 105 քկ., իսկ հրում վարժութեան մէջ արձանագրեց 125 քկ. եւ երկամարտի 230 քկ. արդիւնքով գրաւեց 3-րդ դիրքը ու շահեցաւ պրոնզէ մետալը:

- տղոց 105 քկ. դասակարգին մէջ Ռոման Սիմոնիակեան խաղերու արծաթէ մետալակիր Սիմոն Մարտիրոսեան արձանագրեց 184 քկ. պոկում եւ 230 քկ. հրում վարժութեան մէջ եւ երկամարտի 414 քկ. գումարով գրաւեց առաջին դիրքը եւ շահեցաւ ոսկիէ մետալը: Նոյն դասակարգին մէջ Սամուէլ Գասպարեան գրաւեց 7-րդ դիրքը:

- տղոց 105+ քկ. դասակարգին մէջ Գոռ Մինասեան արձանագրեց 211 քկ. պոկում եւ 235 քկ. հրում վարժութեան մէջ եւ երկամարտի 446 քկ. գումարով գրաւեց երկրորդ դիրքը եւ շահեցաւ արծաթէ մետալը: Նոյն դասակարգին մէջ Ռուբէն Ալեքսանեան արձանագրեց 190 քկ. պոկում եւ 244 քկ. հրում վարժութեան մէջ եւ երկամարտի 434 քկ. գումարով գրաւեց երրորդ դիրքը եւ շահեցաւ պրոնզէ մետալը:

Մինչեւ 15 տարեկան 50 քկ. դասակարգին մէջ Արա Պօղոսեան պոկում

վարժութեան մէջ արձանագրեց 81 քկ., իսկ հրում վարժութեան մէջ՝ 105 քկ. եւ երկամարտի 186 քկ. արդիւնքով գրաւեց առաջին դիրքը ու դարձաւ Եւրոպայի ախոյեան:

Մինչեւ 17 տարեկան 50 քկ. դասակարգին մէջ Սոնթ Միխայրեան պոկում վարժութեան մէջ արձանագրեց 91 քկ., իսկ հրում վարժութեան մէջ՝ 102 քկ. եւ երկամարտի 193 քկ. արդիւնքով գրաւեց երկրորդ դիրքը ու շահեցաւ արծաթէ մետալը:

### Մարմամարզութիւն

#### Աշխարհի Ախոյեանութիւն

### Մերտինեան՝ 5-րդ



Քանատայի Մոնրեալ քաղաքին մէջ շարունակուող մարմամարզութեան Աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, Նժոյգաթափեր մրցումի մասնագետ Յարութիւն Մերտինեան աւարտական փուլին շահեցաւ 14.700 կետ եւ գրաւեց 5-րդ դիրքը: Ստորեւ տեսնել Աշխարհի ախոյեանութեան մրցումներուն արձանագրուած արդիւնքները.

#### Կիներ

- Անհատական ընդհանուր. 1-Մորկըն Յըրտ-ԱՄՆ 55.232 կետ, 2-Էլիզապետ Դիլք-Քանատա 55.132, 3-Ելենա Էրեմինա-Ռուսիա 54.799 կետ
- Ցատկ-vault. 1-Մարիա Փասեքա-Ռուսիա 14.850 կետ, 2-Ճէյտ Բերի-ԱՄՆ 14.766 կետ, 3-Ժիլիա Շթայնկրուպըր-Չուից 14.466 կետ
- Ոչ զուգահեռական ձողեր-uneven bars. 1-Եիլին Ֆան-Չին 15.166 կետ, 2-Ելենա Էրեմինա-Ռուս 15.100 կետ, 3-Նինա Տերվէլ-Պել 15.033 կետ
- Հաւասարակշռութեան ձող-balance beam. 1-Փոլին Շեֆըր-Գեր 13.533 կետ, 2-Մորկըն Յըրտ-ԱՄՆ 13.400 կետ, 3-Թապէա Ալթ-Գեր 13.300 կետ
- Գետնային շարժումներ. 1-Մայ Մուրաքամի-Ճաք 14.233 կետ, 2-Ճէյտ Բերի-ԱՄՆ 14.200 կետ, 3-Զլոտիա Ֆրակափան-Գեր 13.933 կետ

#### Տղայք

- Անհատական ընդհանուր. 1-Ռուդէնկ Շիաս-Չին 86.933 կետ, 2-Չաոփան Լին-Չին 86.448, 3-Քենզօ Շիրայի-Ճաքոն 86.431 կետ
- Գետնի շարժումներ. 1-Քենզօ Շիրայի-Ճաքոն 15.633 կետ, 2-Արտեմ Տոլկոպիաթ-Իսր 14.533 կետ, 3-Եոլ Մոլտաուըր-ԱՄՆ 14.500 կետ
- Նժոյգաթափեր-pommel horse. 1-Մաքս Ուիթլըք-Բրիտ 15.441 կետ, 2-Դաւիթ Պելիավսքի-Ռուսիա 15.100 կետ, 3-Ռուդէնկ Շիաս-Չին 15.066 կետ
- Օղակներ-rings. 1-Էլթերիոս Փեթրունիաս-Յուն 15.443 կետ, 2-Տենիս Ապլիագին-Ռուսիա 15.333 կետ, 3-Եանկ Լիու-Չին 15.266 կետ
- Ցատկ-vault. 1-Քենզօ Շիրայի-Ճաքոն 14.900 կետ, 2-Իկոր Ռատիվիլով-Ուքր 14.899 կետ, 3-Հանսոլ Զիմ-Հար. Զորեա 14.766 կետ
- Չուգահեռական ձողեր-parallel bars. 1-Ժինկյուան Չու-Չին 15.900 կետ, 2-Օլէկ Վերնիայե-Ուքր 15.833 կետ, 3-Դաւիթ Պելիավսքի-Ռուսիա 15.266 կետ
- Հորիզոնական ձող-horizontal bar. 1-Թին Սրայիչ-Խրուաթ 14.433 կետ, 2-Էիքէ Չոնտըրլանտ-Յոլ 14.233 կետ, 3-Պարթ Տիւրլու-Յոլ 14.200 կետ

Մետալներու վերջնական դասաւորում.

1-Չինաստան	3 ո	1 ա	2 պ	6 մետալ
2-Ճաքոն	3,	0,	2,	5
3-Ռուսիա	1,	3,	2,	6
4-ԱՄՆ	1,	3,	1,	5

#### Հայաստանի Տղոց Ախոյեանութիւն

### Արթուր Դաւթեան Տիտղոսակիր

Հայաստանի մարմամարզութեան ախոյեանութեան մրցումները տեղի ունեցան «Հրանդ Շահինեան»ի անուան մարզադպրոցին մէջ: Անհատական ընդհանուր մրցումին, ուր մարզիկները կը մրցին տղոց վեց գործիքներուն վրայ, առաջին դիրքը գրաւեց Արթուր Դաւթեանը, 2-րդ դիրքը գրաւեց Վիգէն Խաչատրեանը, իսկ երրորդ դիրքը՝ Արմէն Պետրոսեանը:

- Գործիքներու մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- Ազատ գետնային շարժումներ-floor exercises՝ Արթուր Դաւթեան 13.333 կետ
- Չուգահեռական ձող-parallel bars՝ Արթուր Դաւթեան 13.933 կետ
- Յենացատկ-vault՝ Արթուր Դաւթեան 14.5 կետ
- Պտտածող-horizontal bar՝ Արթուր Դաւթեան 13.0 կետ
- Օղակներ-rings՝ Վահագն Դաւթեան 15.0 կետ
- Նժոյգաթափ-pommel horse՝ Յարութիւն Մերտինեան 14.9 կետ: